

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

14 օգոստոսի 2025 թվականի N 1145-Ն

**ԳՈՏԻՆԵՐԻ ԵՎ ԱԳԼՈՄԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել գոտիների և ագլոմերացիաների դասակարգումը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2030 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության

փոխվարչապետ                      Տ. Խաչատրյան

2025 թ. օգոստոսի 15

Երևան

Հավելված

ՀՀ կառավարության

2025 թվականի օգոստոսի 14-ի

N 1145-Ն որոշման

**ԳՈՏԻՆԵՐԻ ԵՎ ԱԳԼՈՄԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

## **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն հավելվածով դասակարգվում են Հայաստանի Հանրապետությունում օդի որակի մոնիթորինգի, գնահատման և կառավարման նպատակով առանձնացված գոտիները և ազլումերացիաները:

2. Դասակարգումը նպատակ ունի ապահովելու օդի որակի մոնիթորինգի, գնահատման և կառավարման համար տարածքների հստակ սահմանումը, աղտոտման աղբյուրների տարածական դիտարկումը, մոնիթորինգի դիտակետերի տեղադրման համար արդյունավետ բաշխումը:

## **2. ԳՈՏԻՆԵՐԻ ԵՎ ԱԳԼՈՄԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

3. Մթնոլորտային օդի որակի գնահատման և կառավարման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքը դասակարգվում է գոտիների և ազլումերացիայի՝ համաձայն N 1 աղյուսակի:

## **3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

4. Գոտիների և ազլումերացիաների դասակարգումը ենթակա է պարբերական վերանայման՝ կախված աղտոտման աղբյուրների փոփոխությունից, օդի որակի գնահատման նոր տվյալներից կամ վարչատարածքային վերափոխումներից:

5. Ֆիքսված դիտակայանում կատարվող չափումներն անհրաժեշտության դեպքում զուգորդվում են մոդելավորման մեթոդներով կամ ինդիկատիվ չափումներով:

6. Այն գոտիներում կամ ազլումերացիաներում, որտեղ մթնոլորտային օդում դիտարկված աղտոտող նյութերի կոնցենտրացիաները գերազանցում են տվյալ նյութերի սահմանային արժեքները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակվում են մթնոլորտային օդի որակի պահպանությանն ուղղված ծրագրեր:

7. Յուրաքանչյուր գոտի կամ ագլոմերացիա դասակարգվում է ըստ հիմնական աղտոտիչների գնահատման շեմերի:

8. Յուրաքանչյուր գոտու կամ ագլոմերացիայի համար Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է օդի որակի գնահատում՝ ֆիքսված, ինդիկատիվ չափումներով կամ մոդելավորման մեթոդներով:

9. Ֆիքսված չափումները պարտադիր են այն գոտիներում, որտեղ գերազանցվում են գնահատման շեմերը:

10. Մոդելավորման մեթոդների կիրառման արդյունքները կամ ինդիկատիվ չափումներից ստացված տվյալները լրացնում են ֆիքսված չափումներից ստացված տվյալներին:

11. Այն գոտիներում կամ ագլոմերացիայում, որտեղ մթնոլորտային օդում դիտարկված հիմնական աղտոտող նյութերի կոնցենտրացիաները գերազանցում են սահմանված գնահատման շեմերը, սակայն չեն գերազանցում տվյալ նյութերի սահմանային արժեքները, մթնոլորտային օդի որակի գնահատում իրականացնելիս կարող են նվազեցվել ֆիքսված չափումների համար անհրաժեշտ դիտակետերի կամ դիտակայանների քանակը՝ լրացնելով գնահատումն ինդիկատիվ չափումներով կամ մոդելավորման մեթոդներով:

12. Գոտիների կամ ագլոմերացիաների դասակարգումը վերանայվում է լիազոր մարմնի կողմից առնվազն յուրաքանչյուր 5 տարին մեկ պարբերականությամբ կամ, անհրաժեշտության դեպքում, ավելի վաղ՝ սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում:

Աղյուսակ N 1. Գոտիներ և ագլոմերացիա

\_\_\_\_\_.

|NN|Տարածքային |Տիպը |Հիմնական |Մթնոլորտային օդի որակի

|ը/կ|միավորը | |աղտոտիչները |գնահատման եղանակները,

| | | |դիտակայանների քանակն ու

| | | |տեսակը

|\_\_\_\_\_|\_\_\_\_\_|\_\_\_\_\_|\_\_\_\_\_|\_\_\_\_\_.

|1. |Երևան քաղաք |ազլումերացիա|Կախված մասնիկներ|1. Ավտոմատ |

| | | |(PM2.5,PM10) |1) Ֆիքսված կամ անշարժ |

| | | |Ազոտի երկօքսիդ |դիտակայան |

| | | |(NO2) |Քաղաքային ֆոնային-2 հատ |

| | | |Ծծումբի երկօքսիդ|արդյունաբերական-1 հատ |

| | | |(SO2) |տրանսպորտային-2 հատ |

| | | |Ածխածնի մոնօքսիդ|ֆոնային-1 հատ |

| | | |(CO) |2) անհրաժեշտության |

| | | |Գետնամերձ օդոն |դեպքում` նաև շարժական |

| | | |(O3) |դիտակայան |

| | | |Փոշու մեջ ծանր |\_\_\_\_\_||

| | | |մետաղներ, ցնդող |2. Ոչ ավտոմատ |

| | | |օրգանական |1) Շուրջօրյա ակտիվ (24- |

| | | |միացություններ, |ծամյա) նմուշառման եղանակ |

| | | |մասնավորապես` |2) Պասիվ նմուշառման եղանակ|

| | | |բենզոլ, |\_\_\_\_\_||

| | | |բենզապիրեն, |3. Մոդելավորում |

| | | |նիկել (Ni), | |

| | | |կադմիում (Cd), | |

| | | |արսեն (As), | |

| | | |կապար (Pb) և | |

| | | |այլն, | |

| | | |ամոնիակ (NH3) | |

|\_\_\_\_\_|\_\_\_\_\_||\_\_\_\_\_||\_\_\_\_\_||

|2. |Հյուսիսային |գոտի |Կախված մասնիկներ|1. Ավտոմատ |

|  |                |  |                                             |  |
|--|----------------|--|---------------------------------------------|--|
|  | (Շիրակի և      |  | (PM2.5, PM10)  1) Ֆիքսված կամ անշարժ        |  |
|  | (Լոռու մարզեր) |  | Ազոտի երկօքսիդ  դիտակայան                   |  |
|  |                |  | (NO2)  Քաղաքային ֆոնային-3 հատ              |  |
|  |                |  | Ծծումբի երկօքսիդ (Գյումրի 1 հատ, Վանաձոր    |  |
|  |                |  | (SO2)  1 հատ, Ալավերդի 1 հատ)               |  |
|  |                |  | Ածխածնի մոնօքսիդ 2) անհրաժեշտության         |  |
|  |                |  | (CO)  դեպքում` նաև շարժական                 |  |
|  |                |  | Գետնամերձ օզոն  դիտակայան                   |  |
|  |                |  | (O3)  _____                                 |  |
|  |                |  | Փոշու մեջ ծանր  2. Ոչ ավտոմատ               |  |
|  |                |  | մետաղներ, ցնդող  1) Շուրջօրյա ակտիվ (24-    |  |
|  |                |  | օրգանական  ծամյա) նմուշառման եղանակ         |  |
|  |                |  | միացություններ,  2) Պասիվ նմուշառման եղանակ |  |
|  |                |  | մասնավորապես`  _____                        |  |
|  |                |  | լբենզոլ,  3. Մոդելավորում                   |  |
|  |                |  | լբենզապիրեն,                                |  |
|  |                |  | նիկել (Ni),                                 |  |
|  |                |  | կադմիում (Cd),                              |  |
|  |                |  | արսեն (As),                                 |  |
|  |                |  | կապար (Pb) և                                |  |
|  |                |  | լայն,                                       |  |
|  |                |  | ամոնիակ (NH3)                               |  |
|  |                |  | _____                                       |  |

|3. |Կենտրոնական |գոտի |Կախված մասնիկներ|1. Ավտոմատ |

| | (Կոտայքի և | | (PM2.5, PM10) |1) Ֆիքսված կամ անշարժ |





|  |  |                                                        |       |
|--|--|--------------------------------------------------------|-------|
|  |  | Ծծումբի երկօքսիդ (Քաջարան)                             |       |
|  |  | (SO2)   Քաղաքային ֆոնային-1 հատ                        |       |
|  |  | Ածխածնի մոնօքսիդ (Կապան)                               |       |
|  |  | (CO)   2) անհրաժեշտության                              |       |
|  |  | Գետնամերձ օդոն  դեպքում` նաև շարժական                  |       |
|  |  | (O3)  դիտակայան                                        |       |
|  |  | Փոշու մեջ ծանր                                         | _____ |
|  |  | մետաղներ, ցնդող  2. Ոչ ավտոմատ                         |       |
|  |  | օրգանական  1) Շուրջօրյա ակտիվ (24-                     |       |
|  |  | միացություններ,  ծամյա) նմուշառման եղանակ              |       |
|  |  | մասնավորապես`  2) Պասիվ նմուշառման եղանակ              |       |
|  |  | բենզոլ,                                                | _____ |
|  |  | բենզապիրեն,  3. Մոդելավորում                           |       |
|  |  | նիկել (Ni),                                            |       |
|  |  | կադմիում (Cd),                                         |       |
|  |  | արսեն (As),                                            |       |
|  |  | կապար (Pb) և                                           |       |
|  |  | այլն,                                                  |       |
|  |  | ամոնիակ (NH3)                                          |       |
|  |  | _____                                                  | _____ |
|  |  | 6.  Արևելյան  գոտի  Կախված մասնիկներ 1. Ավտոմատ`       |       |
|  |  | (Գեղարքունիքի)  (PM2.5, PM10)  անհրաժեշտության դեպքում |       |
|  |  | և Տավուշի    Ագոտի երկօքսիդ  շարժական դիտակայանի       |       |
|  |  | մարզեր)    (NO2)  կիրառում                             |       |
|  |  | Ծծումբի երկօքսիդ _____                                 |       |

|  |  |  |                     |                            |  |
|--|--|--|---------------------|----------------------------|--|
|  |  |  | (SO2)               | 2. Ոչ ավտոմատ              |  |
|  |  |  | Ածխածնի մոնոքսիդ 1) | Շուրջօրյա ակտիվ (24-       |  |
|  |  |  | (CO)                | ժամյա) նմուշառման եղանակ   |  |
|  |  |  | Գետնամերձ օդոն      | 2) Պասիվ նմուշառման եղանակ |  |
|  |  |  | (O3)                | _____                      |  |
|  |  |  | Փոշու մեջ ծանր      | 3. Մոդելավորում            |  |
|  |  |  | մետաղներ, ցնդող     |                            |  |
|  |  |  | օրգանական           |                            |  |
|  |  |  | միացություններ,     |                            |  |
|  |  |  | մասնավորապես`       |                            |  |
|  |  |  | բենզոլ,             |                            |  |
|  |  |  | բենզապիրեն,         |                            |  |
|  |  |  | նիկել (Ni),         |                            |  |
|  |  |  | կադմիում (Cd),      |                            |  |
|  |  |  | արսեն (As),         |                            |  |
|  |  |  | կապար (Pb) և        |                            |  |
|  |  |  | այլն,               |                            |  |
|  |  |  | ամոնիակ             |                            |  |
|  |  |  | (NH3)               |                            |  |

\_\_\_\_\_.

Պաշտոնական հրապարակման օրը` 15 օգոստոսի 2025 թվական: